ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանի, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման վարչության պետ Քրիստինե Գաբուզյանի և նույն վարչության մոնիթորինգի բաժնի պետ Հասմիկ Տիգրանյանի Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք. Կարեն Կարապետյան, Քրիստինե Գաբուզյան և Հասմիկ Տիգրանյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝ որպես Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբում (այսուհետ նաև՝ ԳՐԵԿՈ) ՀՀ մշտական պատվիրակության ղեկավար, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ և նույն վարչության մոնիթորինգի բաժնի պետ՝ որպես ԳՐԵԿՈ-ում ՀՀ մշտական պատվիրակության անդամներ:

Գործուղման վայրը և ժամկետները. Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2023 թվականի մարտի 19-ից մարտի 25-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի քարտուղարություն:

Գործուղման նպատակը. մասնակցություն ԳՐԵԿՈ-ի 93-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները. Հայաստանի Հանրապետության՝ ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 2-րդ միջանկյալ զեկույցի քննարկում, ընթացիկ բանակցություններ և զեկույցի հաստատում, Ադրբեջանի և Պորտուգալիայի՝ ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի զեկույցների քննարկում և հաստատում, Դանիայի՝ ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 3-րդ միջանկյալ զեկույցի քննարկում և հաստատում, Բոսնիա և Հերցոգովինայի, Մոլդովայի և Լեհաստանի, Ուկրաինայի, Չեխիայի, Մոնակոյի՝ ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 2-րդ միջանկյալ զեկույցների քննարկում և զեկույցների հաստատում,

ԳՐԵԿՈ-ի անդամ պետություններում հակակոռուպցիոն վերջին ձեռքբերումները, քննարկում առաջիկայում նախատեսվող՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակի վերաբերյալ, քննարկում ԳՐԵԿՈ-ի քարտուղարության ներկայացուցիչների հետ ներկայումս ընթացքի մեջ գտնվող ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման 5-րդ փուլի վերաբերյալ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կարեն Կարապետյանը, Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը մասնակցել են 2023 թվականի մարտի 20-ից մարտի 24-ը կայացած ԳՐԵԿՈ-ի 93-րդ լիագումար նիստին: Նշված նիստին քննարկվել է Հայաստանի Հանրապետության՝ ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 2-րդ միջանկյալ զեկույցը, տեղի են ունեցել ընթացիկ բանակցություններ և հաստատվել է վերո նշյալ զեկույցը, քննարկվել և հաստատվել են Ադրբեջանի և Պորտուգալիայի՝ ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի զեկույցները, քննարկվել և հաստատվել է Դանիայի՝ ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 3-րդ միջանկյալ զեկույցը, քննարկվել և հաստատվել են Բոսնիա և Հերցոգովինայի, Մոլդովայի և Լեհաստանի, Ուկրաինայի, Չեխիայի, Մոնակոյի՝ ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 2-րդ միջանկյալ զեկույցները, ներկայացվել են ԳՐԵԿՈ-ի անդամ պետություններում հակակոռուպցիոն վերջին ձեռքբերումները, քննարկվել է առաջիկայում նախատեսվող՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակը, ԳՐԵԿՈ-ի քարտուղարության ներկայացուցիչների հետ քննարկվել են ներկայումս ընթացքի մեջ գտնվող ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման 5-րդ փուլին առնչվող հարցեր:

Հայաստանի Հանրապետությանն առնչվող քննարկումների վերաբերյալ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլի 2-րդ միջանկյալ զեկույցի (այսուհետ՝ Զեկույց) նախագծի վերաբերյալ բանակցությունները ԳՐԵԿՈ-ի քարտուղարության և Հայաստանի Հանրապետության հետ սկսվել են մարտի 20-ին և շարունակվել մինչև մարտի 22-ը, որոնց մասնակցել, հարցերին պատասխանել և փաստարկներ են ներկայացրել Կարեն Կարապետյանը, Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը: Բանակցությունների և քննարկումների արդյունքում հաջողվել է բարձրացնել Հայաստանի Հանրապետության կատարողականի արդյունքները և

ամրագրել նաև դատախազությանն առնչվող ԳՐԵԿՈ-ի հանձնարարականի կատարված գնահատվելը: Զեկույցը քննարկվել է սույն թվականի մարտի 22-ին և հաստատվել մարտի 24-ին: Արդյունքում՝ 2022 թվականին իրականացված լայնածավալ հակակոռուպցիոն և դատահիրավական ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև նշյալ բանակցությունների և քննարկումների արդյունքում ԳՐԵԿՈ-ի կողմից թվով ևս երկու հանձնարարական գնահատվել է կատարված, վեջնարդյունքում՝ Հայաստանը վերջապես դուրս է եկել ԳՐԵԿՈ-ի գնահատման անհամապատասխանության գործընթացից՝ այլևս չհամարվելով «համընդհանուր անբավարար» կատարողական ունեցող երկիր՝ այդ կարգավիճակում Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր 2019 թվականից:

Քրիստինե Գաբուզյանը մասնակցել է ԳՐԵԿՈ-ի կողմից Ուկրաինայի գնահատման 4-րդ փուլի 2-րդ միջանկյալ զեկույցի նախագծի վերաբերյալ քննարկումներին ԳՐԵԿՈ-ի քարտուղարության և Ուկրաինայի պատվիրակության ներկայացուցիչների հետ: Սույն թվականի մարտի 21-ին Քրիստինե Գաբուզյանը զեկուցել է ԳՐԵԿՈ-ի կողմից Ուկրաինայի գնահատման 4-րդ փուլի 2-րդ միջանկյալ զեկույցի նախագծի՝ դատավորների և դատախազների գործունեությանն առնչվող եզրահանգումները:

Սույն թվականի մարտի 22-ին Զեկույցի քննարկման շրջաններում Կարեն Կարապետյանը՝ որպես ԳՐԵԿՈ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավար, հանդես է եկել բացման խոսքով, ներկայացրել ԳՐԵԿՈ-ի հանձնառությունների կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ներկայացրել ՀՀ դիրքորոշումը Զեկույցում ամրագրվող՝ յուրաքանչյուր հանձնարարարականի կատարման արդյունքների վերաբերյալ:

Սույն թվականի մարտի 23-ին կայացած՝ «ԳՐԵԿՈ-ի անդամ պետություններում հակակոռուպցիոն վերջին ձեռքբերումները» խորագրով քննարկմանը Կարեն Կարապետյանը ներկայացրել է հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ արձանագրած ձեռքբերումները վերջին 1 տարվա ընթացքում:

Նույն օրը կայացած «ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակը» խորագրով քննարկմանը ԳՐԵԿՈ-ում ՀՀ պատվիրակության անդամները ներկայացրել են Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը առաջարկվող թեմաների վերաբերյալ,

միաժամանակ պատրաստակամություն են հայտնել ներգրավվել ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակը մշակելու նպատակով նախատեսվող աշխատանքային թիմում:

Հասմիկ Տիգրանյանը գործուղման ողջ ժամանակահատվածում ներգրավված է եղել ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլի միջանկյալ զեկույցի մշակման, դրա համար անհրաժեշտ ուսումնասիրության իրականացման, դիրքորոշման ներկայացման աշխատանքներում, ԳՐԵԿՈ-ի քարտուղարության հետ քննարկումների ընթացքում ներկայացրել է դիրքորոշումներ, տվել պարզաբանումներ:

Հասմիկ Տիգրանյանը և Քրիստինե Գաբուզյանը ԳՐԵԿՈ-ի քարտուղարության ներկայացուցիչների հետ քննարկել են ներկայումս ընթացքի մեջ գտնվող՝ ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման 5-րդ փուլին առնչվող հարցեր, ներկայացրել պարզաբանումներ և պատասխանել տրվող հարցադրումներին:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝

Կարեն Կարապետյան

29.03.2023թ.